

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայկազեան Հայագիտական Հանդես տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն ի վեր, Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին կողմէ:

Ան կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան պատմական, հնագիտական, աշխարհագրական, բանասիրական, կրօնական, լեզուագիտական, գրական, ազգագրական, մշակոյթի (կրթութեան, քաղաքացիական, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւն.), տնտեսագիտական, իմաստասիրական, իրաւագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի նիւթեր:

Հայկազեան Հայագիտական Հանդեսին մէջ կը հրատարակուին հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական եւ մատենագիտական ցանկեր եւ մահագրականներ:

Ներկայացուած աշխատակցութիւնները պարտին ըլլալ անտիպ եւ հրատարակումի համար այլուր յղուած չըլլան: Անոնք նախընտրաբար ըլլալու են մինչեւ շուրջ 20-25 մեքենագիր էջ: Փափաքելի է աշխատակցութիւնները ստանալ համակարգիչի թուայնացած տարբերակով (soft copy), նախընտրաբար՝ KDWIN ծրագրի հայերէն phonetic շարուածքով:

Իւրաքանչիւր աշխատակցութեան ծանօթագրութիւններու բաժինին մէջ պէտք է նշուին հեղինակին եւ օգտագործուած գիրքին անունը, հրատարակութեան տարեթիւր, հրատարակիչը կամ տպարանը եւ էջը. յօդուածներու պարագային՝ յօդուածագիրին անունն ու յօդուածին ամբողջական խորագիրը, թերթին անունը, հրատարակութեան տարեթիւր եւ էջաթիւր. իսկ արխիւային փաստաթուղթերու պարագային՝ նշուին փաստաթուղթի հեղինակը եւ խորագիրը, գտնուած վայրը, համարակալումը: Աշխատակցութիւնը պարտի ունենալ համառօտ ներածական մը ուր ներկայացուի նիւթը, անոր կարեւորութիւնը, մօտեցման եղանակը եւ բերած նորութիւնը: Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն հակիրճ ամփոփում մը, շուրջ 150 բառ: Յօդուածին պէտք է կցուած ըլլայ նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրականը եւ ելեկտրոնային հասցէն՝ առ ի հրատարակութիւն: Հեղինակը նաեւ պարտի գրաւոր հաստատել իր նիւթին անտիպ

կամ մասնակի հրատարակուած ըլլալը եւ այլուր հրատարակութեան համար դրկուած չըլլալը:

Հրատարակելի բոլոր աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին քերականական եւ ուղղագրական խմբագրումի: Այլ փոփոխութիւններու պարագային տեղեակ կը պահուի նոյնինքն հեղինակը: Հայագիր յօդուածները կը հրատարակուին հայերէնի դասական ուղղագրութեան սկզբունքներով: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ կարելի լաւագոյնս պատճենուած կամ լուսանկարուած պատկերներ, գծանկարներ, փաստաթուղթեր եւ քարտէսներ: Հեղինակը պարտի նշել անոնց աղբիւրը եւ ապահովել հրատարակման արտօնութիւնը:

Հրատարակուած նիւթերը կ'արտացոլացնեն հեղինակին տեսակետը:

Քննարկումներ բաժինով խմբագրութիւնս կը հրաւիրէ տուեալ նիւթին շուրջ հիմնատր այլ կարծիք ունեցող մասնագէտներ՝ առարկայականօրէն քննարկելու տուեալ նիւթը եւ արտայայտելու իրենց տեսակետը:

Յօդուածներու, քրթակցութիւններու, բաժանորդագրութեան, նախորդ քիւերու ստացումի եւ այլ հարցերով պէտք է գրել հետեւեալ հասցէին .-

Haigazian Armenological Review

P.O.Box 11-1748 Beirut-Lebanon

Fax: 01-349230/1, 01-353010/1/2

Email: review@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երկու ամիս ետք:

Հեղինակներ կամ հրատարակիչներ, որոնք կը փափաքին իրենց գիրքին գրախօսուիլը ՀՀ-ի մէջ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք, պարտին յղել այդ գիրքէն երկու օրինակ, որոնցմէ մին կը յանձնուի գրախօսողին, իսկ երկրորդը՝ Հայկազեան Համալսարանի Հայագիտական Տէրեան Գրադարանին:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի մէջ հրատարակուած որեւէ նիւթ կարելի է մէջբերում, յղում կատարել:

Հրատարակուած աշխատասիրութեան հեղինակը անվճար կը ստանայ Հանդէսի տուեալ հատորէն երկու օրինակ եւ իր յօդուածէն 20 օրինակ առանձնատիպ:

NOTES TO CONTRIBUTORS

Haigazian Armenological Review is published annually from 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University.

The review is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with history, archaeology, geography, philology, religion, linguistics, literature, ethnography, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, philosophy, politics, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, scrutiny, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French.

Manuscripts submitted to *Haigazian Armenological Review* should preferably be 20-25 typewritten pages in length. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published, in any language. Presentation of manuscripts submitted for consideration on disc with hard copy is preferred. All discs are acceptable.

Authors should provide in the endnotes the name of the author, title, the year of publication and relevant page numbers of all the books they have cited. In the case of cited articles, they should mention the title of the book or journal in which the articles appear, the numbers of volume and part, the year of publication, and relevant page numbers. Submitted manuscripts must include a 150-word summary in Armenian or English.

The editors reserve the right to copyedit manuscripts to conform to the review's style. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *Haigazian Armenological Review* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P. O. Box 11-1748, Beirut Lebanon.
Fax: (01) 341230/31 or (01) 352010/11/12
Email: review@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *Haigazian Armenological Review*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to 20 offprint and two copies of the volume in which their contribution is published.